

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԹԱՑԻՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿԻՐԱՌԱՆԵՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Կիրառահեն լեզվաբանությունը (the usage-based linguistics) կամ լեզվի կիրառահեն տեսությունը (the usage-based theory of language), որը սկիզբ է առնում 20-րդ դարի 80-ականներից, արդի լեզվաբանության ամենատարածված ուղղություններից է: Այս տեսության առանցքային դրույթն այն է, որ լեզվակառուցվածքի բնույթը պայմանավորված է լեզվագործածությամբ, որը անմիջական ազդեցություն ունի լեզվական օրինաչափությունների ձևավորման, դրանց մտածական արտացոլման գործընթացի վրա: Կիրառահեն լեզվաբանության առաջացմանը անշուշտ նպաստեցին ընդհանուր լեզվաբանական տեսության մեջ 20-րդ դ. 70-ական թվականներից նկատվող մի շարք կարևոր զարգացումներ, որոնց շնորհիվ հաղթահարվում են սոսյուրյան երկու հիմնական՝ համաժամանակություն-տարածամանակություն և լեզու-խոսք հակադրությունները, և վերանայվում է դրանց փոխհարաբերությունը: Ըստ այդմ՝ համաժամանակյա օրինաչափությունները բացատրվում և լիովին հասկանալի են դառնում դրանց ձևավորման տարածամանակյա գործընթացների քննությամբ, մյուս կողմից՝ լեզվական փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են լեզվագործածության առանձնահատկություններով: Ուստի լեզվագործածության, լեզվական փոփոխությունների և լեզվակառուցվածքի փոխհարաբերության ուսումնասիրությունը առաջնային կարևորություն է ձեռք բերում¹:

Հայտնի է նաև, որ կիրառահաճախականությունը (the frequency of use)՝ հոգելեզվաբանական և ճանաչողական գործընթացների վրա ու-

¹ Տե՛ս **J. Bybee**, From usage to grammar: the mind's response to repetition, *Language*, 82, 2006, էջ 711-733, **J. Bybee**, **C. Beckner**, Usage-based theory, In: **B. Heine**, **H. Narrog** (eds.), *The Oxford Handbook of Linguistic Analysis*, Oxford University press, 2010, էջ 827-855, **H. Diessel**, Usage-based linguistics, In: **Mark Aronoff** (ed.), *Oxford Research Encyclopedia of Linguistics*, New York: Oxford University Press, 2017 // <http://www.personal.uni-jena.de/~x4diho/publi.html>, դիտված՝ 13.02.2019, նաև՝ **J. H. Greenberg**, Rethinking linguistics diachronically, *Language*, Vol. 55, № 2, 1979, էջ 275-290, **J. Bybee**, The diachronic dimension in explanation, In: **J. Hawkins** (ed.), *Explaining Language Universals*, Oxford, 1988, էջ 350-379, **J. Bybee**, Language change and universals, In: **R. Mairal**, **J. Gil** (eds.), *Linguistic Universals*, Cambridge University Press, 2006, էջ 179-194:

նեցած իր հետևանքային ազդեցություններով, լեզվակառուցվածքի համաժամանակյա օրինաչափությունների և տարածամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է²:

Սույն հոդվածում փորձ է արվում նախ ներկայացնելու կիրառահեն լեզվաբանության կարևոր դրույթները, իսկ այնուհետև այդ տեսանկյունից դիտարկելու արդի հայերենի ընթացիկ ձևաբանական փոփոխություններից մեկը՝ համաբանական տեղաշարժերը -չ- ածանցավոր բայերի խոնարհման համակարգում: Հարկ ենք համարում նշել, որ *կիրառահեն լեզվաբանություն* անվանումը usage-based linguistics եզրույթի՝ մեր կողմից առաջարկվող հայերեն տարբերակն է, և որ այս լեզվաբանական ուղղության սկզբունքները հայ իրականության մեջ կիրառվում են առաջին անգամ:

Ընդունված է տարբերակել կիրառահաճախականության երկու հիմնական տեսակ՝ լեզվական միավորների կիրառահաճախականություն (տեքստային հաճախականություն - text frequency or token frequency) և լեզվական օրինաչափությունների կիրառահաճախականություն (տիպային հաճախականություն - type frequency): Առաջինը ցույց է տալիս, թե տվյալ լեզվական միավորը քանի անգամ է հանդիպում գրավոր և/կամ բանավոր տեքստում, իսկ երկրորդի միջոցով որոշվում են լեզվական օրինաչափությունների ընդգրկման սահմանները, այսինքն՝ թե քանի լեզվական միավոր է ենթարկվում տվյալ օրինաչափությանը:

Տեքստային հաճախականությունը երկու միանգամայն տարբեր հետևանքային ազդեցություն է ունենում լեզվական փոփոխությունների ժամանակ: Դրանցից առաջինը՝ կիրառահաճախականության պահպանիչ ազդեցությունը, պայմանավորված է այն բանով, որ կրկնությունը գորեղացնում է լեզվական ձևերի հիշողական մտապատկերները (memory representations)՝ դրանք դարձնելով ավելի մատչելի (accessible) ու հասանելի (available) լեզվագործածության գործընթացում և առավել կայուն (դժվարփոփոխելի) ձևաբանական-համաբանական փոփոխությունների դեպքում: Ուստի պատահական չէ, որ *լեզվական անկանոնությունների* ընդհանուր առմամբ բնորոշ են հաճախագործական ձևերին. ձևաբանական և ձևահնչույթային *անկանոնությունները* (որոնք մասամբ նախկին ընդհանուր օրինաչափությունների վերապարուկային մնացորդներ են, մասամբ էլ՝ զանազան ոչ ընդհանրական

² Տե՛ս **J. Bybee**, Markedness: iconicity, economy, and frequency, In: **J. Jung Song** (ed.), *The Oxford Handbook of Linguistic Typology*, Oxford University Press, 2010, Ch. 7, էջ 131-147, **J. Bybee**, Phonology and Language Use, Cambridge University Press, 2004 [2001], էջ 8-13, **J. Bybee**, From usage to grammar..., էջ 711-733, **J. Bybee**, **C. Beckner**, Language use, cognitive processes and linguistic change, In: **C. Bower**, **B. Evans** (eds.), *The Routledge Handbook of Historical Linguistics*, London and New York, 2015, էջ 503-518:

հնչյունափոխությունների արդյունք³) հաճախագործածական ձևերում պահպանվում են համեմատաբար երկար այդ ձևերի հիշողական մտապատկերների զորեղության շնորհիվ: Մինչդեռ սակավագործածական ձևերի փոխարեն հեշտությամբ համաբանական նոր ձևեր են կազմվում ավելի կենսունակ օրինաչափությունների հետևողությամբ: Բացի այդ, հարացույցի առավել հաճախագործածական ձևը հանդես է գալիս որպես հիմնաձև, և համաբանական համահարթեցումը սովորաբար տեղի է ունենում այդ հիմնաձևի հենքի վրա⁴: Այսպես, հայտնի է, որ **ա**) թվի կարգի դեպքում եզակին սովորաբար ավելի հաճախագործածական է, քան հոգնակին, **բ**) ուղիղ հոլովաձևերը ավելի հաճախագործածական են, քան թեք հոլովաձևերը, **գ**) սահմանական եղանակի դեպքում առավել հաճախագործածական է եզ. 3-րդ դ. ձևը, իսկ հրամայական եղանակի դեպքում՝ եզ. 2-րդ դ. ձևը, **դ**) ներկան ժամանակաձևերից ամենահաճախագործածականն է և այլն⁵:

Իսկ չափազանց բարձր կիրառահաճախականությունը ոչ միայն պահպանիչ ազդեցություն է ունենում, այլև հանգեցնում է տվյալ լեզվական միավորի ինքնուրույնացմանը և անկախացմանը (autonomy) հարաբերակից քերականական ձևերից, այդ թվում՝ նույն հարացույցի մնացած անդամներից՝ նախադրյալ ստեղծելով տարահիմքության առաջացման համար⁶:

Մյուս կողմից՝ լեզվական միավորների բարձր կիրառահաճախականությունը հնչյունական փոփոխությունների ժամանակ ճիշտ հակառակ թուլացնող ազդեցություն է ունենում. հնչյունափոխությունը ավելի վաղ և ավելի մեծ չափով տեղի է ունենում առավել հաճախագործածական ձևերում: Այսինքն՝ հնչյունափոխությունը չի ընդգրկում համանման բոլոր դեպքերը միաժամանակ, ինչպես ժամանակին կարծում էին երիտքերականները, այլ տեղի է ունենում հնչյունափոխության բառային տարածում (lexical diffusion of sound change)՝ բառ առ բառ սկզբունքով և աստիճանաբար: Ընդ որում՝ ընթացիկ հնչյունափոխությունները, որպես կանոն, տարբերակայնություն են հանդես բերում, իսկ

³ Տե՛ս **M. Haspelmath, A. D. Sims**, Understanding Morphology, 2nd ed., Hodder Education, An Hachette UK Company, 2010, էջ 275-276:

⁴ Տե՛ս **J. Bybee**, Frequency of Use and the Organization of Language, Oxford University Press, 2007, Introduction, էջ 10-11, Ch. 3, էջ 41-69, **նույնի**՝ Phonology..., էջ 12, 113-116, **նույնի**՝ Morphology: A Study of the Relation Between Meaning and Form, Amsterdam/Philadelphia, 1985, էջ 49-78, 117-122, նաև՝ **M. Haspelmath, A. D. Sims**, նշվ. աշխ., էջ 273-276:

⁵ Տե՛ս **J. H. Greenberg**, Language Universals: With Special Reference to Feature Hierarchies, reprinted ed., Berlin/New York, 2005 [1966]), էջ 31-51, **J. Bybee**, Morphology..., էջ 50-54, 74-77, **M. Haspelmath**, Creating economical morphosyntactic patterns in language change, In: **J. Good** (ed.), Linguistic Universals and Language Change, Oxford University Press, 2008, էջ 188, 191-193, հմմտ. նաև՝ **P. M. Tiersma**, Local and general markedness, Language, Vol. 58, № 4, 1982, էջ 832-849:

⁶ Տե՛ս **J. Bybee**, Frequency of Use..., էջ 13-14, Ch. 3, էջ 53, **J. Bybee**, Morphology..., էջ 50-58, 117-127:

դրանց համընդհանուր, օրինաչափ բնույթն ապահովվում է միայն լիակատար ավարտին հասնելու փուլում⁷:

Այն, որ արտաբերականորեն պայմանավորված (articulatorily conditioned) թուլացական հնչյունափոխությունները ավելի վաղ տեղի են ունենում հաճախագործածական ձևերում⁸, այժմ ընդունված, հայտնի իրողություն է: Մակայն այդ երևույթի բուն էությունը երկու տարբեր կերպ է մեկնաբանվում:

Առաջին մոտեցման համաձայն՝ հիշյալ երևույթը պայմանավորված է խնայողության (economy) միտումով: Խոսողները հակված են լեզվական միավորներն արտասանել նվազագույն ջանք գործադրելով, բայց իհարկե այդ միտումը չափավորվում և սահմանափակվում է՝ արդյունավետ հաղորդակցության և խոսքի կռահելիության պահանջից ելնելով: Եվ քանի որ հաճախագործածական ձևերը խոսքային իրարություններում ավելի կռահելի են խոսակցի կողմից, ուստի խոսողներն ավելի անփութորեն են արտասանում դրանք, որի շնորհիվ թուլացական հնչյունափոխությունները ավելի արագ են տեղի ունենում այդ ձևերում⁹:

Մինչդեռ ըստ երկրորդ մոտեցման՝ կրկնությունը ինքնին հանգեցնում է արտասանական սերտացման և ինքնաբերականացման (automation). անմիջականորեն միմյանց հաջորդող արտաբերական շարժումները (articulatory gestures) ենթարկվում են տևողաժամանակային փոփոխության և ուժգնության նվազեցման, այսինքն՝ արտաբերական շարժումները կանխաիրացման (anticipation) հետևանքով եզրածածկում են միմյանց (overlap), և ոչ անհրաժեշտ կամ ծայրահեղ արտաբերական շարժումների արտասանական ուժը նվազում է, կամ նրանք ընդհանրապես դուրս են մնում արտասանվածքից: Դրա շնորհիվ արտաբերական շարժումների միջև անցումները դառնում են ավելի սահուն, և տեղի է ունենում արտասանական սերտացում և ինքնաբերականացում: Իհարկե, այս դեպքում էլ լեզվական կռահելիությունը

⁷ Տե՛ս **B. S. Phillips**, *Word Frequency and Lexical Diffusion*, Palgrave Macmillan, 2006, հատկապես, էջ 1-95, **J. Bybee**, *Frequency of Use...*, Ch. 10, էջ 216-232, Ch. 11, էջ 235-261, **նույնի**՝ *Language, Usage and Cognition*, Cambridge University Press, 2010, էջ 20, **նույնի**՝ *Patterns of lexical diffusion and articulatory motivation for sound change*, In: **Maria-Josep Solé, Daniel Recasens** (eds.), *The Initiation of Sound Change: Perception, Production, and Social Factors*, Amsterdam/Philadelphia, 2012, էջ 211-234:

⁸ Բնականաբար նկատի չեն առնվում ոչ արտաբերական գործոններով պայմանավորված հնչյունափոխությունները, որոնք կիրառահաճախականության ազդեցության տեսանկյունից նման են համաբանական փոփոխություններին (տե՛ս **B. S. Phillips**, *Word frequency and the actuation of sound change*, *Language*, Vol., 60, № 2, 1984, էջ 320-342, **նույնի**՝ *Lexical diffusion, lexical frequency and lexical analysis*, In: **J. Bybee, P. Hopper** (eds.), *Frequency and the Emergence of Linguistic Structure*, Amsterdam/Philadelphia, 2001, էջ 123-136, **J. Bybee**, *Frequency of Use...*, Ch. 11, էջ 242-244, **նույնի**՝ *Phonology...*, էջ 77-83):

⁹ Տե՛ս **H. Diessel**, *Frequency effects in language acquisition, language use, and diachronic change*, In: *New Ideas in Psychology*, 25, 2007, հատկապես էջ 115, **M. Haspelmath**, *Creating economical...*, էջ 206:

սահմանափակիչ, չափավորիչ դեր է խաղում¹⁰:

Ակնհայտ է, որ թուլացական հնչյունափոխությունները տեղի են ունենում արտաբերական շարժումների ուժգնության նվազեցման և տևողաժամանակային փոփոխության եղանակով: Ինչ վերաբերում է խնայողության միտումին, այն անշուշտ կարևոր դեր է խաղում ձևաշարահյուսական օրինաչափությունների ձևավորման հարցում¹¹: Այդուհանդերձ կարծում ենք՝ ճիշտ չէր լինի խնայողության միտումը որպես դրդապատճառային գործոն (motivating factor) դիտել թուլացական հնչյունափոխությունների պարագայում, եթե հաշվի առնենք, որ հոգելեզվաբանական գործոններով պայմանավորված լեզվական փոփոխությունները (այդ թվում՝ համաբանական փոփոխությունը) ավելի վաղ տեղի են ունենում ոչ թե հաճախագործաձևական, այլ համեմատաբար սակավագործաձևական ձևերում¹²: Ի դեպ, լեզուներում ոչ նշույթավորված ձևերի հաճախադեպ գրոյական ձևաբանական արտահայտությունը, որը բացատրվում է խնայողության և հավելյալայնությունից խուսափելու միտումով, դարձյալ պայմանավորված է կիրառահաճախականության պահպանիչ ազդեցությամբ, քանի որ տվյալ դեպքում առավել հաճախագործաձևական ձևը սովորաբար պահպանվում է անփոփոխ, իսկ ավելի սակավագործաձևական նշույթավորված ձև(եր)ը տարբերակիչ ցուցիչներ է(են) ստանում¹³:

Ինչ վերաբերում է տիպային հաճախականությանը, որոշ հետազոտողներ այն դիտում են որպես լեզվական օրինաչափությունների կենսունակությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն: Ըստ այդմ՝ տվյալ քերականական ձևույթի կամ կառույցի՝ նույն դիրքում միմյանց փոխարինող տարբեր լեզվական միավորների հետ հանդես գալը ինքնին դրուրացնում է այդ կազմության բաղադրիչ մասերի առանձնացման (parsing) և դրանց ներքին կառուցվածքային փոխհարաբերության ճանաչման գործընթացը՝ համաբանական նախադրյալ ստեղծելով նմանատիպ նոր կիրառությունների համար: Միննույն ժամանակ բարձր տիպային հաճախականությունը բնականաբար հանգեցնում է տվյալ քերականական ձևույթի կամ կառույցի հաճախագործաձևությանը՝ գորեղացնելով նրա հիշողական մտապատկերը և այն դարձնելով առավել հասանելի ու մատչելի հետագա նոր կիրառությունների ժամանակ: Իհարկե, գործող օրինաչափությունների յուրացումը և հետագա համաբանական ընդհանրացումը տեղի են ունենում տիպային հաճախականության և տեքստային հաճախականության համատեղ ազդեցությամբ: Բացի այդ, կենսունակության աստիճանը ո-

¹⁰ Տե՛ս **J. Bybee**, Frequency of Use..., Ch. 11, էջ 242-243, նույնի՝ Phonology..., էջ 57-62, 69-79:

¹¹ Տե՛ս **M. Haspelmath**, Creating economical..., էջ 185-214:

¹² Տե՛ս **J. Bybee**, Frequency of Use..., Ch. 11, էջ 243-244:

¹³ Տե՛ս **M. Haspelmath**, Creating economical..., էջ 207-210, նաև՝ **J. Bybee**, Morphology..., էջ 52-58:

րոշելիս հաշվի է առնվում նաև լրացուցիչ այլ գործոնների՝ հնչյունական, իմաստային, ձևաբանական հնարավոր սահմանափակումների առկայությունը¹⁴:

Այլ հետազոտողներ, ընդունելով հանդերձ, որ կենսունակ լեզվական օրինաչափությունները սովորաբար բնութագրվում են բարձր տիպային հաճախականությամբ, գտնում են, որ վերջինս իրականում կարող է լինել ոչ թե կենսունակության պատճառը, այլ նրա հայտանիշը (symptom), քանի որ այնքան էլ պարզ չէ, թե ինչպես է այս կամ այն քերականական օրինաչափությունը պատմականորեն դառնում կենսունակ¹⁵: Բացի այդ, համաժամանակյա տիպային հաճախականությունը կարող է լինել ոչ թե ներկայիս կենսունակության վկայությունը, այլ նախկին կենսունակության հետևանքը¹⁶: Ինչևէ, անկախ կենսունակության առաջացման պատճառներից՝ ակնհայտ է, որ արդեն իսկ կենսունակ (ըստ այդմ՝ նաև բարձր տիպային հաճախականություն ունեցող) լեզվական օրինաչափությունները սովորաբար համաբանական ընդհանրացման ավելի մեծ միտում են ցուցաբերում, քան ոչ այնքան կենսունակ օրինաչափությունները¹⁷:

Համաբանությունը, որը ավանդաբար դիտվել է որպես լեզվական փոփոխության կարևոր հոգելեզվաբանական գործոն, գիտության արդի փուլում առանձնահատուկ ուշադրության է արժանանում ճանաչողական և հոգելեզվաբանական գործընթացների ուսումնասիրման տեսանկյունից: Ըստ այդմ՝ համաբանությունը՝ իբրև նմանության հարաբերություն (a relation of similarity), համարվում է մարդկային մտածողության հիմնական տիպերից մեկը, որն ընկած է կարգադասման (categorization) ճանաչողական գործընթացի հիմքում¹⁸: Այդ առումով լեզվական-համաբանական փոփոխությունները լեզվական երևույթների մտածական արտացոլումների կարգադասման մեջ փոփոխություններ (changes in categorization), գոյություն ունեցող կարգերի միջև տեղաշարժեր են ներկայացնում, որոնք լեզվական մակարդակում արտահայտվում են տվյալ կենսունակ օրինաչափության համաբանական

¹⁴ Տե՛ս **J. Bybee**, Usage-based grammar and second language acquisition, In: **P. Robonson, N. C. Ellis** (eds), *Handbook of Cognitive Linguistics and Second Language Acquisition*, Routledge, New York and London, 2008, էջ 221-223, 225, նաև **J. Bybee**, *Frequency of Use...*, Ch. 8, էջ 173-175:

¹⁵ Տե՛ս **H. Hans Hock**, *Principles of Historical Linguistics*, 2nd ed., rev. and updated, Berlin/New York, 1991, էջ 173:

¹⁶ Տե՛ս **L. Bauer**, *Morphological Productivity*, Cambridge University Press, 2003, էջ 48-49:

¹⁷ Տե՛ս **H. Hans Hock**, նշվ. աշխ., էջ 173-175, հմմտ. **W. U. Wurzel**, System-dependent morphological naturalness in inflection, In: **W. U. Dressler, W. Mayerthaler, O. Panagl, W. U. Wurzel**, *Leitmotifs in Natural Morphology*, Amsterdam/Philadelphia, 1987, էջ 76-79:

¹⁸ Տե՛ս **J. Bybee, C. Beckner**, Language use, cognitive processes..., էջ 505-507, նաև **R. Anttila**, Analogy: the warp and woof of cognition, In: **B. D. Joseph, R. D. Janda** (eds.), *Handbook of Historical Linguistics*, Blackwell Publishing, 2003, էջ 425-440, **E. Itkonen**, Analogy as Structure and Process: Approaches in Linguistics, Cognitive Psychology and Philosophy of Science, Amsterdam/Philadelphia, 2005:

ընդհանրացմամբ¹⁹: Նկատենք նաև, որ համաբանական փոփոխության ժամանակ ոչ թե հին ձևը ձևափոխության է ենթարկվում, այլ դրան գու-
գահեռ նոր ձև է կազմվում ավելի կենսունակ օրինաչափության կի-
րառմամբ: Ահա թե ինչու նոր համաբանական ձևը և հին ձևը սովորա-
բար մի որոշ ժամանակ գոյակցում են կողք կողքի որպես տարբերակ-
ներ²⁰: Այսինքն՝ հին ձևի համաբանական փոխարինումը նոր ձևով տե-
ղի է ունենում աստիճանաբար՝ անցնելով տարբերակայնության (գու-
գաձևության) միջակա փուլով²¹: Եվ դա պատահական չէ, քանի որ տա-
րածամանակյա փոփոխությունները լեզվի համաժամանակյա փուլում՝
լեզվագործածության ընթացքում, սկիզբ են առնում տարբերակայնությ-
ան տեսքով, և լեզվական բոլոր ընթացիկ փոփոխությունները (ongoing
changes), որպես կանոն, տարբերակայնություն են հանդես բերում²²:

Ավանդաբար առանձնացվում է ձևաբանական-համաբանական
փոփոխության երկու հիմնական տիպ՝ համաբանական համահարթե-
ցում (analogical leveling) և համաբանական ընդլայնում (analogical
extension): Համահարթեցման դեպքում հարացույցի ներսում ձևա-
հնչույթային հերթագայությունը (հիմքային տարբերակայնությունը)
վերանում է, իսկ ընդլայնման ժամանակ տվյալ քերականական օրի-
նաչափությունը տարածվում է սկզբնապես այլ օրինաչափությունների
պատկանող լեզվական միավորների վրա, այսինքն՝ այդ օրինաչա-
փության ընդգրկման սահմաններն ընդլայնվում են²³: Մինչդեռ ըստ Ա.
Գառեթի՝ համաբանական համահարթեցումը նույնպես համաբանա-
կան ընդլայնման արդյունք է, քանի որ համահարթեցումը իրականում
տեղի է ունենում ոչ թե հարացույցային միասնականացման միտումի
պահանջով, ինչպես ընդունված է ասել, այլ լեզվում արդեն գոյություն
ունեցող և սովորաբար քանակապես գերակշռող ոչ հերթագայվող օրի-
նաչափությունը համաբանական ընդհանրացմամբ տարածվում է
սկզբնապես հերթագայվող հարացույցի վրա²⁴:

Ինչ խոսք, ձևահնչույթային հերթագայությունների համահարթեց-
ման գործընթացի վրա հարակից ոչ հերթագայվող հարացույցները կա-
րող են ազդեցություն ունենալ: Այդուհանդերձ, կարծում ենք՝ ճիշտ չէր
լինի անտեսել *մեկ իմաստ – մեկ ձև* լեզվական միտումը, որը հայտնի է
նաև միաձևության միտում (uniformity) կամ Հումբոլդտի ընդհանրույթ

¹⁹ Տե՛ս **J. Bybee, C. Beckner**, Language use, cognitive processes..., էջ 506-507:

²⁰ Տե՛ս **J. Bybee**, Phonology..., էջ 114, **նույնի** Diachronic linguistics, In: **D. Geeraerts and H. Cuyckens** (eds.), The Oxford Handbook of Cognitive Linguistics, Oxford University Press, 2007, Ch. 36, էջ 958-959, **H. Hans Hock**, նշվ. աշխ., էջ 168-169:

²¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 207:

²² Տե՛ս **H. Andersen**, Actualization and the (uni)directionality of change, In: **H. Andersen** (ed.), Actualization: Linguistic Change in Progress, Amsterdam/Philadelphia, 2001, էջ 225-248:

²³ Տե՛ս **J. Bybee**, Diachronic linguistics..., էջ 958-964:

²⁴ Տե՛ս **A. Garrett**, Paradigmatic uniformity and markedness, In: **J. Good** (ed.), նշվ. աշխ., էջ 125-127, 130-131:

(Humboldt's universal) անվամբ²⁵: Անշուշտ, ձևահնչության հերթագայությունները որոշակիորեն մթագնում են ձևայինների ձևաբանական նույնականությունը, ուստի համահարթեցման միտումը ձգտում է վերականգնել ձևային միասնականությունը և դրանով իսկ՝ ավելի անմիջական փոխհարաբերություն հաստատել իմաստի և ձևի միջև²⁶: Ինչպես նկատում է Վ. Մայերթալերը, այդ միտումը հենվում է մարդկային ուղեղի կենսաբանորեն տրված նախապատվությունների վրա, քանի որ ընկալման տեսության համաձայն՝ օբյեկտի կայունությունը (object constancy) դյուրացնում է ընկալման գործընթացը: Այդպես է նաև լեզվական կայուն (ոչ տարբերակային) արտահայտության պարագայում²⁷: Արդ, ձևահնչության հերթագայությունները, որոնք սովորաբար առաջանում են հնչունափոխությունների հետևանքով սկզբնական հնչունական պայմանավորվածություն ունեցող հերթագայությունների հետագա քերականացմամբ ու բառայնացմամբ²⁸, ընդհանուր առմամբ համաբանական համահարթեցման միտում են ցուցաբերում, մանավանդ եթե դրանք չեն ծառայում կարևոր քերականական հակադրությունների արտահայտմանը²⁹: Ընդ որում՝ որքան ավելի սերտ է իմաստային կապը լեզվական ձևերի միջև, այնքան ավելի մեծ է համաբանական համահարթեցման հավանականությունը³⁰:

Ինչպես վերը նշվեց, համաբանական փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են կիրառահաճախականությամբ: Ընդ որում՝ տեքստային հաճախականությունը վճռորոշ դեր է խաղում համաբանական համահարթեցման, իսկ տիպային հաճախականությունը՝ համաբանական ընդլայնման դեպքում: Բացի այդ, լեզվական օրինաչափությունների ձևավորման հարցում որոշակի դեր են խաղում նաև մի շարք ընդհանուր լեզվական միտումներ (այդ թվում՝ ինսյոդոլոգիայի և պատկերագրայնության միտումները)³¹:

Ըստ բնական լեզվաբանության՝ ընդհանուր լեզվական միտումների հիմքում ընկած են համընդհանուր բնականության մի շարք հարաչափեր (parameters), որոնք էլ իրենց հերթին ճանաչողական (cognitive)

²⁵ Տե՛ս **Th. Vennemann**, Phonetic analogy and conceptual analogy, In: Th. Vennemann, T. H. Wilbur (eds.), Schuchardt, the Neogrammarians, and the Transformational Theory of Phonological Change: Four Essays, Frankfurt, 1972, էջ 183-185, **H. Hans Hock**, Analogical Change, In: **B. D. Joseph, R. D. Janda** (eds.), նշվ. աշխ., էջ 445:

²⁶ Տե՛ս **H. Hans Hock**, Principles of Historical..., էջ 235-237:

²⁷ Տե՛ս **W. Mayerthaler**, System-independent morphological naturalness, In: **W. U. Dressler, W. Mayerthaler, O. Panagl, W. U. Wurzel**, նշվ. աշխ., էջ 49:

²⁸ Տե՛ս **J. Bybee**, Phonology..., էջ 96-109, 214-215, **J. Bybee**, Formal universals as emergent phenomena: the origins of structure preservation, In: **J. Good** (ed.), նշվ. աշխ., էջ 108-121:

²⁹ Տե՛ս **H. Hans Hock**, Principles of Historical..., էջ 168-169:

³⁰ Տե՛ս **J. Bybee**, Morphology..., էջ 64-65:

³¹ Տե՛ս **J. Haiman**, Iconic and economic motivation, Language, Vol. 59, № 4, 1983, էջ 781-819, **Խայնի** Competing motivations, In: **J. Jung Song** (ed.), նշվ. աշխ., 148-165, **M. Haspelmath**, Creating economical..., էջ 185-214, **B. MacWhinney, A. Malchukov, E. Moravcsik** (eds.), Competing Motivations in Grammar and Usage, Oxford University Press, 2014:

և նշանագիտական պայմանավորվածություն ունեն: Բայց այդ հարաչափերը հաճախ միմյանց հակադիր միտումներ են ներկայացնում, այնպես որ մի հարաչափի տեսանկյունից բնական ձևը կարող է ոչ բնական լինել մեկ այլ հարաչափի տեսանկյունից³²: Ուստի լեզվական փոփոխությունների ժամանակ մի լեզու կարող է նախապատվություն տալ բնականության մի հարաչափի, իսկ մեկ այլ լեզու՝ այլ հարաչափի՝ կախված այն բանից, թե որ հարաչափի միտումն է ավելի համահունչ տվյալ լեզվի համակարգաբնորոշիչ հատկություններին (system-defining properties): Յուրաքանչյուր լեզվի գերիշխող (այն է՝ կենսունակ և տիպային բարձր հաճախականություն ունեցող) օրինաչափությունները կազմում են այդ լեզվի համակարգաբնորոշիչ հատկությունները, որոնք սովորաբար համաբանական ընդհանրացման միտում են ցուցաբերում, եթե նույնիսկ դրանք համընդհանուր բնականության հարաչափերի տեսանկյունից այնքան էլ բնական ձևեր չեն: Ընդունված է ասել, որ նման դեպքերում համակարգային համահունչությանը (system adequacy) կամ համակարգային բնականությանը (system-dependent naturalness) նախապատվություն է տրվում համընդհանուր, վերհամակարգային բնականության (system-independent naturalness) հանդեպ³³: Բայց իրականում դա ցույց է տալիս, որ կիրառահաճախականությունը և կենսունակությունը լեզվական փոփոխությունների պարագայում ավելի զորեղ պայմանավորիչ գործոններ են, քան համընդհանուր բնականության հարաչափերը: Ի դեպ, կիրառահաճախականության հետեւանքային ազդեցությունները նկատելի են հատկապես ընթացիկ փոփոխությունների դեպքում: Ուստի ստորև կփորձենք դիտարկել արդի հայերենի այդ կարգի փոփոխություններից մեկը:

Որոշ հետազոտողներ անդրադարձել են արդի հայերենի ընթացիկ տեղաշարժերին³⁴: Սակայն այդ ուսումնասիրությունները հիմնականում նկարագրական բնույթի են և չեն լուսաբանում տվյալ փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող նախադրյալներն ու դրդապատճառային գործոնները: Մեր կարծիքով, արդի հայերենի այդ տեղաշարժերը բացատրվում և լիովին հասկանալի են դառնում կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո: Իհարկե, մեկ հոդվա-

³² Տե՛ս **W. U. Dressler**, Naturalness and morphological change, In: **B. D. Joseph, R. D. Janda** (eds.), նշվ. աշխ., էջ 461-471, **W. U. Dressler, M. Kilani-Schoch**, Natural Morphology, In: **A. Hippisley, G. Stump** (eds.), The Cambridge Handbook of Morphology, Cambridge University Press, 2016, Ch. 14, էջ 356-368:

³³ Տե՛ս **W. U. Wurzel**, նշվ. աշխ., էջ 59-98, **W. U. Dressler**, Naturalness and morphological..., էջ 461-471:

³⁴ Տե՛ս **Լ. Թեյյան**, Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում, «Ձահուկյանական ընթերցումներ», Եր., 2009, էջ 63-74, **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011, **Ս. Աբաջյան**, Տեղաշարժեր արդի հայերենի անկանոն բայերի համակարգում // Կրթությունը և գիտությունը արցախում, հուլիս-դեկտեմբեր, 2014, 3-4, էջ 54-60:

ծի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ այդ բոլոր երևույթներին, ուստի այստեղ կփորձենք սահմանափակվել դրանցից միայն մեկի դիտարկմամբ:

Արդի հայերենի հիմնական տեղաշարժերից մեկը –**չ**- ածանցով բայերի հարացույցային փոփոխություններն են, որոնք, լինելով դեռևս ընթացքի մեջ (այն է՝ ընթացիկ), դրսևորվում են տարբերակայնությամբ (զուգաձևությունների տեսքով): Նկատելի է փոփոխության երեք հիմնական միտում. 1) որոշ բայեր անցում են կատարում –**ն**- ածանցով բայերի հարացույցային տիպին (թռչել-թռնել, փախչել-փախնել, կպչել-կպնել), 2) մի քանի բայեր ներկայի հիմքում –**չ**- ածանցի անկմամբ ձգտում են միանալ **ե** խոնարհման պարզ բայերին (հմմտ. սառչել-սառչում եմ-սառա և սառել-սառում եմ-սառեցի, ուռչել-ուռչում եմ-ուռա և ուռել-ուռում եմ-ուռեցի, կորչել-կորչում եմ-կորա և կորել-կորում եմ), 3) որոշ բայեր էլ միտում ունեն անցում կատարել **ե** խոնարհման պարզ բայերի հարացույցային տիպին ածանցը արմատին ձուլելու եղանակով (հմմտ. դիպչել-դիպա, բայց նաև՝ դիպչեց, դիպչել է, հանգչել-հանգավ, բայց նաև՝ հանգչեց, հանգչել է): Իսկ երբեմն էլ առկա են ոչ թե զուգաձևություններ, այլ եռաձևություններ, ինչպես՝ հանգչել-հանգավ-հանգչեց-հանգեց, սառչել-սառա-սառեցի-սառչեցի, ուռչել-ուռա-ուռեցի-ուռչեցի³⁵: Իհարկե նշված զուգաձևությունների մի մասն ավելի գործածական է, քան մյուսները, և, բացի այդ, որոշ զուգաձևություններ հանդես են գալիս թե՛ գրական, թե՛ խոսակցական տարբերակներում, իսկ ուրիշները՝ միայն խոսակցական տարբերակում³⁶: Սակայն, գրական թե խոսակցական տարբերակում հանդես գալը ընթացիկ տեղաշարժերի դեպքում այնքան էլ էական չէ, եթե հաշվի առնենք, որ լեզվական փոփոխությունները սովորաբար սկիզբ են առնում կենդանի, անկաշկանդ խոսքում (colloquial speech)՝ սկզբնապես ըմբռնվելով որպես «մերժելի, սխալ» ձևեր, իսկ հետո հետզհետե ներթափանցում են գրական լեզվի նորմա և դառնում կանոնիկ: Ուստի ընթացիկ փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը բացատրելու հարցում կարևոր է հաշվի առնել մի կողմից տվյալ լեզվական ձևերի հաճախագործածության աստիճանը (տեքստային հաճախականությունը), մյուս կողմից՝ տարբերակային ձևերից յուրաքանչյուրի ձևաբանական օրինաչափության տիպային հաճախականությունը և կենսունակության աստիճանը:

Հատկանշական է, որ –**չ**- ածանցով բայերը արդի հայերենում ունեն բավական ցածր տեքստային և տիպային հաճախականություն (ընդամենը ութ բայ): Անշուշտ դրանով են պայմանավորված այդ շարքի բայերի ձևաբանական անկայունությունը և հեշտությամբ համաբա-

³⁵ Բերված ձևերի համար տե՛ս **Լ. Թեյլան**, նշվ. աշխ., էջ 72, **Յու. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 62-66:

³⁶ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 62-66:

նական փոփոխությունների ենթարկվելը: Այսպես, ըստ Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի» բերած տվյալների՝ **-չ-** ածանցով բայերի տեքստային հաճախականության ընդհանուր պատկերը ավելի քան երկու միլիոն բառագործածությամբ ընտրանքի ծավալի պարագայում հետևյալն է՝ **թոչել** (939), **կորչել** (594), **փախչել** (558), **կպչել** (236), **հանգչել** (199), **դիպչել** (118), **ուռչել** (82), **սառչել** (63)³⁷: Թեև մենք դեռևս չունենք արդի հայերենի 21-րդ դ. լեզվավիճակն արտացոլող հաճախականության նոր բառարան, որը հնարավորություն կտար ավելի ստույգ որոշելու այս կամ այն բառի ու քերականական ձևի հաճախականությունը ներկա պահին, այդուհանդերձ **-չ-** ածանցով բայերի ձևաբանական անկայունությունը և վերը բերված բառարանային տվյալները միասին կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո աներկբայորեն վկայում են այդ բայերի համեմատաբար ցածր տեքստային հաճախականության մասին: Ուստի դժվար է համաձայնել այն կարծիքի հետ, ըստ որի՝ «**-չ-** սոսկածանցով բայերը թվով քիչ են և անկայուն, **թեև շատ գործածական են** (ընդգծումը մերն է՝ Մ. Ա.)»³⁸: Մյուս կողմից՝ **-(ն)չ-** ածանցով բայերի խոնարհման տիպը գրաբարյան շրջանից ի վեր պատմականորեն եղել է ոչ կենսունակ, և սկզբնապես այդ շարքին պատկանող մի շարք բայեր արդեն վաղուց կա՛մ անցել են հարացույցային այլ տիպի (հմմտ. գրբ. **կառչել-կառեայ** > ժ. հայ. **կառչել-կառչեցի**, գրբ. **մարտնչել-մարտեայ** > ժ. հայ. **մարտնչել-մարտնչեցի**), կա՛մ էլ դուրս են եկել գործածությունից՝ փոխարինվելով նոր կազմություններով (հմմտ. գրբ. **թաքչել**, ժ. հայ. **թաքնվել**, գրբ. **մատչել**, ժ. հայ. **մոտենալ**, իսկ **փչչել-փվվել**, **հայչել-հալվել** ձևերի պարագայում այդ գործընթացը դեռևս լիովին չի ավարտվել): Ընդունված է ասել, որ **փչչել-փվվել**, **հայչել-հալվել** ձևերի դեպքում «**-չ-**ն փոխարինվում է **վ-**ով»³⁹: Սակայն, մեր կարծիքով, բառակազմական փոխհարաբերության տեսանկյունից **փչչել** և **փվվել**, **հայչել** և **հալվել** ձևերը պատմականորեն անկախ են միմյանցից, **փվվել** և **հալվել** բայերը կազմվել են **փլել** և **հալել** բայերի անցողական իմաստով տարբերակներից: Ըստ այդմ՝ **փլել-փվվել**, **հալել-հալվել** գույգերի բառակազմական փոխհարաբերությունը մոտավորապես նույնն է, ինչ **ձուլել-ձուլվել**, **խեղդել-խեղդվել** և այլ գույգերի դեպքում՝ չնայած այն բանին, որ **փլել** և **հալել** ձևերը ունեն նաև անանցողական կիրառություն (հատկապես ժողովրդախոսակցական լեզվում): Նմանապես գրբ. **թաքչել** բայից պատմականորեն անկախ է ժ. հայ. **թաքնվել** ձևը, որը **թաքուն** ածականից կրավորակերպ

³⁷ Այս և հետագա շարադրանքում բերված հայերեն բառերի հաճախականության համար տե՛ս Բ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Եր., 1982, էջ 369-757:

³⁸ Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Լ. Մարգարյան, Լ. Ավետիսյան, Ուղեցույց հայոց լեզվի, գիրք Ա, Եր., 2017, էջ 187, տե՛ս նաև Յու. Ավետիսյան, Զ. Զաքարյան, Հայոց լեզու, Ձևաբանություն, 2-րդ լրամշակված հրատ., Եր., 2015, էջ 77:

³⁹ Լ. Թեյան, նշվ. աշխ., էջ 72:

չեզոք վ-ով կազմվել է նույն կերպ, ինչպես **գժվել** բայը՝ **գիժ** ածականից և այլն: Մյուս կողմից՝ գրբ. **կառչել** բայի հետագա փոփոխությունը, որը արդի հայերենում վաղուց ավարտված գործընթաց է, ցույց է տալիս, որ արդի հայ. **դիպչեցի, հանգչեց** և նման ձևերում -չ- ածանցը արմատին ձուլվելու վերը նշված միտումը նոր չէ, այլ որոշակի վաղեմություն ունի:

Արդի հայերենի **ե** խոնարհման պարզ բայերի մի զգալի մասի բարձր տեքստային հաճախականությունը և խոնարհման այդ տիպի կենսունակությունն ու բարձր տիպային հաճախականությունն այնքան ակնհայտ են, որ դա փաստարկելու կարիք չկա: Ինչ վերաբերում է արդի հայերենի **-ն-** (< գրբ. **-ան-** և **-ն-**) ածանցով բայերին, ապա ձևաբանական այդ տիպը նույնպես պատմականորեն առանձնապես աչքի չի ընկել իր կենսունակությամբ: Արդի հայերենի միակ բայը, որը հետագայում է ավելացել այդ բայաշարքին (չհաշված **-չ-** ածանցով որոշ բայերի՝ **-ն-** ածանցով բայաշարքին միանալու ընթացիկ միտումը), **թողնել** բայն է (հմմտ. գրբ. **թողուլ**, ժ. հայ. **թողնել**): Ընդ որում՝ այս դեպքում հարացույցային փոփոխությունը լիակատար չէ, քանի որ **թողնել** բայը (անշուշտ համեմատաբար բարձր հաճախականության (2376) շնորհիվ) անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում պահպանել է ներգործաձև վերջավորություններով իր սկզբնական խոնարհման տիպը՝ մինևույն ժամանակ ենթարկվելով **ե** խոնարհման պարզ բայերի համաբանական ազդեցությանը (հմմտ. ժ. հայ. **թողի, թողիր, թողեց, թողինք, թողիք, թողին** և **թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցին**): Մյուս կողմից՝ **-ն-** (< գրբ. **-ան-** և **-ն-**) ածանցով մի շարք բայեր պատմականորեն անցել են **ե** խոնարհման պարզ բայերի շարքը՝ համաբանական ընդլայնման գործընթացի շնորհիվ, ընդ որում՝ ածանցը դադարել է որպես այդպիսին գիտակցվելուց՝ ձուլվելով արմատին. հմմտ. գրբ. **զբոսնուլ-զբոսայ**, ժ. հայ. **զբոսնել-զբոսնեցի**, գրբ. **զարթնուլ-զարթեայ**, ժ. հայ. **զարթնել-զարթնեցի**, գրբ. **յառնել-յարեայ**, ժ. հայ. **հառնել-հառնեցի**, իսկ արդի հայերենի **բուսնել** և **հեծնել** բայերի դեպքում այդ գործընթացը դեռևս լիովին չի ավարտվել, ուստի առկա են զուգաձևություններ՝ ժ. հայ. **բուսնել-բուսնեց-բուսավ, հեծնել-հեծնեց-հեծավ**: Դարձյալ նկատենք, որ հարացույցային փոփոխության ենթարկված բայերը, այդ շարքի համեմատաբար ցածր տեքստային հաճախականություն ունեցողներն են՝ **հառնել** (46), **զբոսնել** (139), **բուսնել** (76), **հեծնել** (52): Բայց այդ շարքի հիմնական անդամներն աչքի են ընկնում բավական բարձր հաճախականությամբ (**տեսնել**-6785, **անցնել**-3545, **գտնել**-2736, **ընկնել**-2072, **մտնել**-2116, **առնել**-1828), որոնց շնորհիվ միջին տեքստային հաճախականություն ունեցողները նույնպես (**իջնել**-1303, **ելնել**-1092, **մեռնել**-950, **հազնել**-677) կարողանում են կայուն պահպանել տվյալ հարացույցային տիպը, և բոլորը միասին ապահովում են այդ ձևաբանական տիպի հարաբերական կայունությունը: Տվյալ բայաշարքը պատմականորեն լքել և լքում են միայն առավել

ցածր հաճախականություն ունեցող բայերը: Միննույն ժամանակ, ինչպես տեսանք, այդ ձևաբանական տիպը արդի հայերենում որոշակի չափավոր կենսունակության միտում է ցուցաբերում՝ իր բայաշարքի մեջ ներառելով **-չ-** ածանցով որոշ բայեր: Այդ գործընթացը, ինչպես նաև որոշ բայերի **-չ-** ածանցի անկմամբ կամ արմատին **-չ-** ածանցի ձուլմամբ **ե** խոնարհման պարզ բայերի հարացույցային տիպին անցնելն ակնհայտորեն տեղի են ունենում համաբանական ընդլայնման գործընթացի շնորհիվ: Ու թեև այդ գործընթացը իրականացվում է երեք տարբեր եղանակով (**-չ-** ածանցի անկմամբ, արմատին **-չ-** ածանցի ձուլմամբ, **-չ-** ածանցի փոխարինմամբ **-ն-** ածանցով), հատկանշական է, որ երեք համաբանական փոփոխություններն էլ ունեն որոշակի ընդհանուր ուղղվածություն. երեք դեպքում էլ ոչ կենսունակ ձևաբանական տիպը փոխարինվում է լիովին կամ մասամբ կենսունակ տիպով, այսինքն՝ այս դեպքում էական դեր են խաղում տիպային հաճախականության և կենսունակության գործոնները: Մյուս կողմից՝ նշված համաբանական փոփոխությունների կոնկրետ ուղղվածությունը պայմանավորելու հարցում, մեր կարծիքով, որոշակի դեր է խաղում նաև առանձին բայերի տեքստային հաճախականությունը, երբեմն էլ՝ արտաքին հնչյունական կազմը: Տեքստային հաճախականության հավանական ազդեցությունը ենթադրելի է հատկապես **-չ-** ածանցով բայերի **-ն-** ածանցով հարացույցային տիպին միանալու գործընթացում: Պատահական չէ, հայերենի խոսակցական տարբերակում տվյալ համաբանական փոփոխությանը կանոնավոր ենթարկվող բայերը երեքն են՝ **թռչել**, **փախչել**, **կայչել**, որոնցից առաջին երկուսը այդ շարքի ամենագործածական, իսկ վերջինը՝ միջին հաճախականության բայերից են (**թռչել**-939, **փախչել**-558, **կայչել**-236): Նկատենք նաև, որ արդի հայերենի **-չ-** ածանցով և **-ն-** ածանցով բայերը անցյալ կատարյալի հիմքից բոլոր ձևերը կազմում են մեկ միասնական սկզբունքով, որն էլ հենց հիմք է ծառայում նշված համաբանական գործընթացի համար: Մինչդեռ **-չ-** ածանցով բայերի և **ե** խոնարհման պարզ բայերի դեպքում կազմությանը լիովին համընկնող ընդամենը երկու ձև է առկա՝ վաղակատար դերբայը և եզ. հրամ. ձևը: Հետևաբար **-չ-** ածանցով բայերը, անցում կատարելով **-ն-** ածանցով բայերի խոնարհման տիպին, հնարավորինս քիչ զոհողության գնով ազատվում են ոչ կենսունակ ածանցի բեռից և միննույն ժամանակ պահպանում իրենց նախկին հարացույցի մի մասը, այն է՝ անցյալ կատարյալի հիմքից կազմվող բոլոր ձևերը: Այդ պարագայում ենթադրելի է, որ **թռչել**, **փախչել**, **կայչել** բայերի թեկուզ ոչ շատ բարձր տեքստային հաճախականությունը որոշակի գորեղություն է հաղորդում դրանց հիշողական մտապատկերներին՝ այդ ձևերը դարձնելով հարաբերականորեն կայուն, որն էլ նպաստում է տվյալ համաբանական գործընթացին: Մինչդեռ այս շարքի մյուս բայերը, որոնք անհամեմատ ցածր հաճախականություն ունեն՝ բացառությամբ

կորչել բայի (**կորչել**-594, **հանգչել**-199, **դիպչել**-118, **ուռչել**-82, **սառչել**-63), ըստ այդմ նաև համեմատաբար ավելի թույլ հիշողական մտապատկերներ, հեշտությամբ կորցնում են իրենց սկզբնական հարացույցի գրեթե բոլոր ձևերը՝ արդի հայերենի առավել կենսունակ հարացույցային տիպի, այն է՝ **ե** խոնարհման պարզ բայերի համաբանական ազդեցությամբ: Այսինքն՝ ի տարբերություն **փախչել**, **թոչել**, **կայչել** բայերի, որոնք համեմատաբար բարձր հաճախականության շնորհիվ գոնե կիսով չափ պահպանում են իրենց նախկին հարացույցային տիպը, **դիպչել**, **ուռչել**, **սառչել**, **հանգչել** բայերի դեպքում այդ գործոնը անհամեմատ ավելի թույլ է, հետևաբար նաև՝ անզոր այդ բայերը գոնե մասամբ պաշտպանելու **ե** խոնարհման պարզ բայերի համաբանական մեծ ազդեցությունից: Այդ առումով ուշագրավ է, որ **կառչել** բայը, որը այդ բայաշարքը լքել է համեմատաբար վաղ, չափազանց ցածր հաճախականություն (56) ունի: Իսկ **կորչել** բայի համաբանական փոփոխության ուղղվածության հարցում հավանաբար որոշակի դեր է խաղացել **ուռչել** և **սառչել** բայերի հետ ունեցած արտաքին հնչյունական կողմի որոշակի ընդհանրությունը, մասնավորապես՝ երեքի դեպքում էլ առկա *լիահունչ ձայնավոր + ր/ռչ* հնչյունաշարակարգային կառուցվածքը (phonotactic structure) ներկայի հիմքային վանկում (այն է՝ **-որչ-**, **-ուռչ-**, **-սառչ-**): Նշենք նաև, որ արդի հայերենում **-չ-** ածանցի անկմամբ համաբանական փոփոխությունը տեղի է ունենում երկու շարքերի համար ընդհանուր ձևերի՝ վաղակատար դերբայի և հրամայականի հիման վրա (հմմտ. **կորչել-կորել է**, **սիրել-սիրել է**, **սառչել-սառել է**, **ուռչել-ուռել է**, **վառել-վառել է** և այլն), իսկ ածանցի ձևումամբ **ե** խոնարհման պարզ բայերի հարացույցային տիպին անցնելուն ինչպես **-չ-**, այնպես էլ **-ն-** ածանցի դեպքում անշուշտ զգալիորեն նպաստել և շարունակում է նպաստել մի խումբ բայերի առկայությունը լեզվում, որոնց **ե** խոնարհիչին նախորդող **ն** և **չ** հնչյունները, թեև հաճախ ծագմամբ արմատական չեն, այդուհանդերձ խոնարհման ժամանակ հնուց ի վեր գործառում են որպես արմատական տարրեր (հմմտ. **կանչել-կանչեցի**, **մատնել-մատնեցի**, **թիկնել-թիկնեցի** և այլն):

Այսպիսով՝ վերը կատարված քննությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ կիրառահաճախականությունը վճռորոշ դեր է խաղում լեզվական փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորելու հարցում, և որ արդի հայերենի **-չ-** ածանցով բայերի ընթացիկ տեղաշարժերը լիովին բացատրվում են կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո: Ուստի արդի հայերեն բառերի ոչ միայն ուղիղ, այլև թեքված (քերականական) ձևերի հաճախականությունն արտացոլող նոր բառարանի ստեղծումը իսկապես հրատապ խնդիր է և, անկասկած, հետազոտական նոր հորիզոններ կբացի հայերենագիտության մեջ:

Բանալի բառեր – տիպային հաճախականություն, տեքստային հաճախականություն, հիշողական մտապատկերներ, ընթացիկ համաբանական փոփոխություններ

САРГИС АВЕТЯН – Одно из текущих изменений в современном армянском языке в свете прикладной лингвистики. – В статье показано, что типовая частотность в современном армянском определяет общую направленность текущих аналогических изменений из непродуктивного класса в более продуктивный в сфере глаголов с суффиксом չ. Между тем конкретная направленность изменения для каждого глагола обуславливается главным образом текстовой частотностью индивидуальных глаголов с суффиксом չ. В частности, глаголы թոճ-չ-ել, փախ-չ-ել, կալ-չ-ել, имеющие сравнительно более высокую частотность и тем самым более сильные памятные (когнитивные) представления, регулярно обнаруживают тенденцию присоединиться к классу глаголов с суффиксом ն. Благодаря этому они сохраняют свою оригинальную парадигму частично неизменной: во всех формах с аористной основой, имеющих общую закономерность спряжения с глаголами с суффиксом ն (ср. թոճ-չ-ել, аор. թոճ-ա, перф. թոճ-ել եմ и գտ-ն-ել, аор. գտ-ա, перф. գտ-ել եմ и т. д.). С другой стороны, глаголы с более низкой частотностью и более слабыми памятными представлениями դիպ-չ-ել, ուռ-չ-ել, սառ-չ-ել, հանգ-չ-ել претерпевают более глубокие парадигматические изменения под сильным аналогическим влиянием наиболее продуктивного класса простых глаголов ե спряжения и переходят в этот класс, отбрасывая суффикс или сливая его с корнем (ср. ուռ-չ-ել, аор. ուռ-չ-եց-ի/ուռ-եց-ի вместо ուռ-ա).

Ключевые слова: типовая частотность, текстовая частотность, текущие аналогические изменения, памятные (когнитивные) представления

SARGIS AVETYAN – One of the Ongoing Changes in Modern Armenian in the Light of Usage-Based Linguistics. – An attempt is made to show that type frequency determines the general directionality of ongoing analogical changes – from the unproductive class to more productive one – in the domain of չ-suffixed verbs in Modern Armenian, whereas the particular choice of directionality for each verb is largely conditioned by the token frequency of individual չ-suffixed verbs. Specifically, the verbs թոճ-չ-ել, փախ-չ-ել, կալ-չ-ել, whose token frequency is relatively higher and, accordingly, memory (cognitive) representations are stronger, almost regularly tend to join the class of ն-suffixed verbs, thereby preserving their original paradigm partly unchanged, namely, in all aorist-stem forms which share common conjugational pattern with ն-suffixed verbs (cf. թոճ-չ-ել, аор. թոճ-ա, перф. թոճ-ել եմ and գտ-ն-ել, аор. գտ-ա, перф. գտ-ել եմ etc.). On the other hand, the lower frequency verbs դիպ-չ-ել, ուռ-չ-ել, սառ-չ-ել, հանգ-չ-ել with their much weaker memory (cognitive) representations, are undergoing more drastic paradigmatic changes under the powerful analogical influence from the most productive class of ե conjugation simple verbs, transferring to the latter class by dropping the suffix or merging it with the root (cf. ուռ-չ-ել, аор. ուռ-չ-եց-ի/ուռ-եց-ի instead of ուռ-ա).

Key words: type frequency, text frequency (token frequency), ongoing analogical changes, memory (cognitive) representations

Ներկայացվել է՝ 10.03.2019

Գրախոսվել է՝ 08.04.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019